ըսէք, որով և Աստուծոյ բարկութիւնը պիտի շարժի ձեր վրայ և այս պատճառաւ արդէն մեծ սուգի մէջ կը գտնուիմ»։ (Ի նշան սգաւորութեան ձախ թեւին վրայ սեաւ կտաւ մը կապած ունէր արդէն[1])։ Ասոնք ըսելով դուրս կ'ելնէ դառն ցաւ և տրտմութիւն յայտնելով ու արտասուելով։

Կառավարութիւնը տեսնելով, որ խեղճ և ապուշ մարդ մ'է, երբէք կարեւորութիւն չը տուաւ ըսածին։

Յիշեալ նոր առաքեալը դեռ կը շարունակէ իր պաշտօնը, այսինքն խաչը ուսը առած փողոցները կը շրջի, ի իրեն հետեւորդ ունենալով շատ մը պարապորդ մանուկներ, որոնք կը ծաղրեն զինքն և կ'այպանեն։

Խմբագիր, կը խնդրեմ ներկայս հրատարակել 'ի տեղեկութիւն ազգայնոց։

1875 Հոկ. 20. Յարութիւն Թ.
Երուսաղէմ. Պալեցեանց։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿՐԹԱՐԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԳԱՄ Ե.

ԱՆՏԱՐԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԱԿԱՆ

Գեղեցիկ ոճով և պարզ մեկնութեամբ բացատրուած է սոյն Տետրակին մէջ կրօնական անտարբերութեան տեսակներն և վնասներն. լուսաբանուած է պարզապէս՝ թէ ինչքան թշուառ է մի ժողովուրդ, մի ազգ, մի հասարակութիւն, երբ կրօնական անտարբերութիւնն տիրած է իւր անդամոց մէջ և ընդհակառակն՝ թէ ինչքան երջանիկ է մի ժողովուրդ, երբ Քրիստոնէական Կրօնն հիմն բռնած է իւր երկրաւոր և երկնաւոր ճշմարիտ երջանկութեան։

Գին դ. 4 ֆր. դահեկան։

ՍԻՐՈՒՆ ՕՐՕՍԱՐԱՆ

Հետաքրքրաշարժ փոքրիկ Գրքոյկ, 88 երեսէ բաղկացեալ, Թարգմանութիւն Գրիգոր Վարդապետի Կ. Պոլսեցւոյ, որ կը պարունակէ իւր մէջ Տասն հիւթաւոր Գոյակաց կամ Մ. պելեաց դիմառնական բանախօսութիւններն, բարոյական մարդիչ և հրահանգիչ եղանակաւ։ Այն բանախօսութեանց կամ ատենախօսութեանց մէջ իւրաքանչիւր Գոյակ կը ջանայ զինքն ջատագովել. իսկ ընդհակառակն՝ իւր դիմախօսն կը ձգնի նորա վնասակար յատկութիւններն յերեւան հանել, որով մին զմիւսն յաղթահարելով կը նշաւակեն զմիմեանս և կը պարզեն, որ վնասակար է մարդոյ՝ չարաչար գործածութիւն ոգելից և գրգռիչ Բ. մպելեաց։

Գին 2 դահեկան։

Կը վաճառուին 'ի գրատան Ս. Ա. Թոռոյս և 'ի Փոխանորդարանի Կ. Պոլսոյ։

---

(1) Յիշեալ Ամերիկացին, քանի մի շաբաթ առաջ, մի ընդարձակ անգլերէն գրշագիր տետրակ եւս մեր պատրիարքարանի սպասաւորին յանձնած էր Ս. Պատրիարքին տալու։ Տետրակն սեաւ ժապաւէն կը կար և սեաւ կնքամոմով կնքուած էր։ Պարունակութիւնն էր մի փոքրիկ յառաջաբան, (որով աշակցութիւն կը խնդրէր մեր Ս. Պատրիարքէն իւր աւետարանական քարոզութեան համար) և Ս. Գրքէն քաղուած շատ վկայութիւններ, բոլորովին առանց կապակցութեան դասաւորուած, որով անհնարին էր իմանալ թէ ի՞նչ կ'ուզէ հասկացնել և ի՞նչ է իւր նպատակն։ Ն. Խ.

digitised by A.R.A.R.@